Մանրություն.— *1.* «Գնեցի զԱտոմին եգին մինչ ի գրատանն 375 սպ» *պետք է հասկանալ «Գնեցի Ատոմի այգին, որը տարածվում է մինչև գրատան պատկանող այգին, 375 սպիտակի»:*

2. Լավ չի հասկացվում 5-րդ տողում «Վարդեվարի յայն գինեն տան ի լերնն» *բառերը, բայց 6-րդ տողի բովանդակությունից պարզվում է, որ Նվիրատուն, բացի Ատոմի այգուց, կարգադրել է ամեն տարի գինի տալ (վարդեվարի այգուց) որ գտնվում է Լերնում:*



Նկ. 81. Արձ. №№ 128 և 129:

3. 6-րդ տողի վերջին ած է գրերն արձանագրության աջակողմյան եզրագծից դուրս են գտնվում, այդ պատճառով դրանք հաշվի չեն առնվել և հաջորդ տողում նորից են գրվել թվականի հետ միասին:

Տարբերություն.— *1. 4-րդ տողի* կամակցութեամբ *բառը* Ջալ, Դրիմ *կարդացել են* կամարարութեամբ:

2. 5-րդ տողում Վարդեվարի յայն գինեն տան ի լերնն Ջալ *կարդացել է* Վարդավառ աւրն այն գինեն տան լերինն:

129. Նախորդի տակին

(Լուս. № 81)

ԺԳ դարի երկրորդ կես

Հրատարակված է՝ Ջալ 34, Դրիմ 63, Վիմ 117

1 *Կամաւն Ա՛յ, ես՝ Սոսթանէս եւ ամուսին իմ Խաթուն տվաք զմե-*
2 *ր դրամագին էգին, որ ի Ջեռնատանին՝ ի գրատունս: Հայրս Կիրակ-*